ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Նոյեմբերի 1-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել քհն. Կյուրեղյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Թողեալ լիցին քեզ մեղք քո... Հաւատք քո կեցուցին զքեզ, երթ ի խաղաղութիւն» (Ղուկ. Է 48, 50) բնաբանով:

*
* *

Նոյեմբերի 8-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Սերովբե աբղ. Իսախանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Սէր երբէք ոչ անկանի» (Ա Կորնթ. ԺԳ 8) բնաբանով:

*
* *

Նոյեմբերի 15-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ասողիկ վրդ. Արիստակեսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Առէք, կերայք, այս է մարմին իմ» (Մատթ. ԻԶ 26) բնաբանով:

*
* *

Նոյեմբերի 22-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Արամ վրդ. Բոյաջյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Սափոր ոսկեղէն լի մանանայիւ, գաւազան ծաղկեալ յարմատոյն յԵսսեայ» (Շարական) բնաբանով:

*
* *

Նոյեմբերի 29-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Շիրակի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Նարեկ եպս. Շաքարյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Օրհնեսցի և պահպանեսցի Հանրապետութիւն և Հայրապետութիւն Հայոց» (Ժամագիրք) բնաբանով (տես էջ 36):

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Դեկտեմբերի 2-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նա-

խագաճությամբ, տեղի ունեցավ միաբանական հավաքույթ:

*
* *

Դեկտեմբերի 6-ին, կիրակի.—Բարեկենդան Ս. Յակովբայ պահոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ավստրալիայի և Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Աղան եպս. Պալիոզյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Յաւել ի մեզ, Տէր ամենակալ, զհաւատ, զյոյս, զսէր և զամենայն գործս առաքինութեան» (Ժամագիրք) բնաբանով:

*
* *

Դեկտեմբերի 13-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Սերովբե աբղ. Իսախանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Ես իսկ եմ յարութիւն և կեանք. որ հաւատայ յիս՝ մի մեռցի ի յաւիտեան» (Հովհ. ԺԱ 25—26) բնաբանով:

*
* *

Դեկտեմբերի 20-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նավասարդ աբղ. Կճոյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Ամենայն որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի. եւ որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի» (Ղուկ. ԺԴ 11) բնաբանով:

*
* *

Դեկտեմբերի 26-ին, շաբաթ.—Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային և առաջին մարտիրոսին:

Այսօր Մայր տաճարում, Ս. Ստեփանոսի խորանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Սեպուհ աբղ. Զուլջյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Երանի որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքայութիւն երկնից» (Մատթ. Ե 10—11) բնաբանով:

*
* *

Դեկտեմբերի 27-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ասողիկ վրդ. Արիստակեսյանը և հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: